Բուժական ծառայություններ

Ի՞նչ է բուժական ծառայությունը:

IHSS-ի համար բուժական ծառայություններ են այն ծառայությունները, որոնք նախքան մատուցուիլը բժշկական մասնագէտի մը կողմէ տրուած արտօնագիր և հմտութիւն կը պահանջեն:

Բուժական ծառայութեան քանի մը օրինակներ են.

- Դեղ տալը կամ սրսկումներ ընելը
- Արեան կամ մէզի քննութիւն
- Վէրք խնամելը
- Քաթեթրի խնամք և խոռոչի լուացում
- Ախտահանուած դարմանումի որևէ խնամք
- Հոգնա, թուային խթանիչ կամ մոմիկներ մտցնելը
- Խողովակով կերակրելը
- Ներծծում

Ձեր նոր մատակարարին ըսէք, թէ ինչ կ՝ակնկալէք:

Գործի ընդունուելու հարցազրոյցի ընթացքին, դուք պէտք է քննարկէք ձեզի համար լիազօրուած IHSS-ի բոլոր ծառայությունները, որոնց շարքին՝ բուժական այն ծառայությունները, որոնց համար ձեզի լիազօրած են IHSS-ի ժամեր: Կարգ մը մատակարարներ կրնան չնախընտրել մատուցելու անձնական խնամքի որոշ տեսակներ և/կամ բուժական ծառայություններ և չեն ուզեր կրել այդ տեսակ խնամքի հետ կապուած պատասխանատուությունը:

Ձեր մատակարարը պէտք է մարզուած ըլլայ բուժական ծառայություններ կատարելու:

IHSS-ի կանոնները կը պահանջեն, որ առողջապահական խնամքի արտօնագրուած մասնագէտ մը, ինչպէս բժիշկը պահանջէ և ղեկավարէ բուժական ծառայությունները: Ձեր բժիշկը բուժական ծառայութեան ձևը պէտք է լեցուցած ըլլայ, և դուք ալ պէտք է ստորագրէք այդ ձևը: Լեցուած ձևը պէտք է քաւնթիի մօտ ըլլայ նախքան ձեր մատակարարին այդ ծառայություններուն դիմաց վճարուիլը:

- Դուք պէտք է ձեր նոր մատակարարին համար կարգադրութիւններ ընէք, որ ձեր բժիշկը մարզէ զինք մատուցելու ձեզի հարկաւոր բուժական ծառայությունները՝ ներառեալ վտանգները: Եթէ դուք վստահ չէք, թէ ինչպէ՞ս մատուցուին ծառայությունները, ատոր համար դուք պէտք է հարցնէք ձեր բժիշկին:

- Դուք և ձեր մատակարարը պէտք է նաև իմանաք բուժական ծառայութիւններ մատուցելու ընթացքին՝ արտակարգ վիճակի պարագային ձեր ընելիքը:
- Շատ կարևոր է, որ քանի ձեր մատակարարը արտօնագրուած առողջապահական մասնագէտի մը կողմէ համապատասխան մարզում Չէ ստացած, ձեզի համար որևէ բուժական ծառայութիւն Չմատուցէ:

Բաներ, որ պէտք է յիշեք.

√ Միշտ վստահ եղեք, որ նախքան որևէ բուժական ծառայութիւն կատարելը ձեր մատակարարը իր ձեռքերը լուայ և ձեռնոցները հագնի: Ասով ապահոված կ՝ըլլաք ձեր և ձեր մատակարարին առողջութիւնը:

√ Բուժական ծառայութիւններու պէտքը կրնայ փոխուիլ աւելի յաճախ քան ուրիշ ծառայութիւններ: Եթէ ձեր պէտքերը փոխուին, դուք պէտք է կապ պահէք ձեր ընկերային ծառայողին հետ, որպէսզի ան կարենայ բուժական պահանջի նոր ձև խնդրել ձեր բժիշկէն:

√ Ձեր մատակարարը կրնայ նաև պէտք ունենալ ստանալու ձեր բժիշկի պահանջած յաւելեալ բուժական նոր մարզումները: